

ԻԳ.00.04 - ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(քաղաքական գիտություններ)

«Միջազգային հարաբերություններ», «արտաքին հարաբերություններ», «դիվանագիտություն», «գեոպոլիտիկա», «գեոէկոնոմիկա» և «գեոստրատեգիա» հասկացությունները:

«Միջազգային հարաբերությունների» ուսումնասիրության աղբյուրներն ու գրականությունը, հայեցակարգը և մեթոդները, նպատակն ու խնդիրները: Միջազգային հարաբերությունների տեսությունները: Համաշխարհային քաղաքականության և միջազգային հարաբերությունների ակտորները:

Դիվանագիտական փաստաթղթերը որպես միջազգային հարաբերությունների ուսումնասիրության հիմնական աղբյուր: Դիվանագիտության սահմանումները: Հ. Նիկոլսոնի, Է. Սատտուի, Ժ. Կամբոնի, Ժ. Սեռեի և այլոց բնորոշումները: Դիվանագիտությունը որպես բանակցություն վարելու արվեստ: Դիվանագիտությունը որպես արտաքին քաղաքականության իրականացման գործիք: Դիվանագիտությունը որպես միջազգային հարաբերությունների մասին գիտություն: Դիվանագիտության և արտաքին քաղաքականության հարաբերակցությունը:

Դիվանագիտության տեղն ու դերը արտաքին հարաբերությունների համակարգում: Դիվանագիտությունը որպես միջազգային հարաբերությունների խաղաղ կարգավորման միջոց: Միջազգային հարաբերությունների պատմական փորձի գնահատականը: Ազգային պետությունների և միջազգային ինստիտուտների դերը դիվանագիտության ապահովման մեջ: Անհատի դերը միջազգային հարաբերություններում և դիվանագիտությունում:

Դիվանագիտական և հյուպատոսական ծառայությունն ու արտաքին հարաբերությունների մարմինները

«Դիվանագիտություն» հասկացությունը. Դիվանագիտությունը որպես գիտություն և արվեստ: Դիվանագիտական հարաբերությունների մասին Վիեննայի 1961 թ. կոնվենցիան: Վիեննայի կոնվենցիան (1963թ.) հյուպատոսական հարաբերությունների մասին: Դիվանագիտական դասեր և ռանգեր: Դիվանագիտական կորպուս: Դուայեն: Դիվանագիտական հարաբերությունների հաստատումը, ընդհատումն ու խզումը: Դեսպանի նշանակման կարգը: Հավատարմագրերի հանձնումն ու դեսպանի հիմնական պարտականությունները: Դեսպանի հետևանքումը և նրա մեկնումը նստավայր երկրից: Հյուպատոսական հիմնարկների կարգերը և անձնակազմը: «Հյուպատոսական իրավունք» հասկացությունը և աղբյուրները:

Դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչությունների արտոնություններն ու իմունիտետը: Դիվանագիտական և հյուպատոսական անձնակազմի արտոնություններն ու իմունիտետը:

Դիվանագիտական գրագրության հիմնական տեսակները: Բազմակողմ դիվանագիտության զարգացման հիմնական փուլերը: «Կոնֆերանսների դիվանագիտությունը»: «Բաց» դիվանագիտության հայեցակարգը: «Հանրային» դիվանագիտության հայեցակարգը: Տնտեսական դիվանագիտությունը որպես բազմակողմ դիվանագիտության գործոն:

Եվրոպական Միության դիվանագիտական մարմինները: ԱՄՆ-ի արտաքին հարաբերությունների մարմինների ընդհանուր բնութագիրը: Մեծ Բրիտանիայի արտաքին հարաբերությունների մարմինների ընդհանուր բնութագիրը: Ֆրանսիայի արտաքին հարաբերությունների մարմինների ընդհանուր բնութագիրը: Ռուսաստանի դաշնության արտաքին հարաբերությունների մարմինների ընդհանուր բնութագիրը:

Այցերի տեսակները, նրանց դերը միջպետական հարաբերություններում:
Դիվանագիտական ընդունելությունների տեսակներն ու առանձնահատկությունները:
Անձնական և վերբալ նոտաներ: Հուշանամակներ և հուշագրեր (մեմորանդում):
Դիվանագիտական ընդունելությունների նախապատրաստումը և անցկացումը:
Դիվանագիտական այցելություններ և գրույցներ:

Դիվանագիտական բանակցությունների արդյունքները (պայմանագիր, համաձայնագիր, կոնվենցիա, հուշագիր, համատեղ հայտարարություն, արձանագրություն, մտադրությունների մասին համաձայնագիր, ջենթլմենյան համաձայնություն):

Դիվանագիտական բանակցությունների տեսակները: Դիվանագիտական բանակցություններ վարելու ազգային առանձնահատկությունների ընդհանուր բնութագիրը:

Դիվանագիտական ծառայության մասին ՀՀ օրենքը դիվանագիտական ծառայության խնդիրների մասին (ընդհանուր դրույթներ): ՀՀ դիվանագիտական ծառայության պաշտոններն ու աստիճանները: ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության ղեկավարի պարտականությունների կատարման անցնելու սկիզբը և ավարտը: ՀՀ դիվանագետի երդումը: ՀՀ դիվանագետի հիմնական իրավունքները և պարտականությունները: ՀՀ դիվանագիտական աստիճանների շնորհումը և աստիճանից զրկելն ըստ ՀՀ օրենքի: ՀՀ ԱԳ-ն կենտրոնական ապարատի կառուցվածքը: ՀՀ օրենքը հյուպատոսական ծառայության խնդիրների մասին (ընդհանուր դրույթներ): ՀՀ հյուպատոսական ծառայության մասին օրենքը նոտարական գործողությունների, հյուպատոսական վավերացման և գանձումների մասին: ՀՀ հյուպատոսի պարտականությունները ՀՀ քաղաքացիների իրավունքների և շահերի պաշտպանության հարցում: (ՀՀ քաղաքացիների գույքի պահպանության, կալանավորված քաղաքացիների պաշտպանության): Հյուպատոսի նշանակման կարգն ըստ ՀՀ հյուպատոսական ծառայության մասին օրենքի: ՀՀ օրենքը Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի կնքման, վավերացման

և չեղյալ հայտարարման մասին: ՀՀ արտաքին հարաբերությունների պետական մարմինները, դրանց խնդիրները և պարտականությունները:

Միջազգային հարաբերություններն ու միջազգային իրավունքը

Միջազգային իրավունքի սույեկտները: Ճանաչումը միջազգային իրավունքում: Պետությունների ճանաչումը և դրա տեսակները: Պետությունների ճանաչման ձևերը: Միջազգային իրավունքի հիմնական սկզբունքները: Ազգերի ինքնորոշման, պետությունների տարածքային ամբողջականության և սահմանների անխախտելիության սկզբունքները: Միջազգային օդային իրավունք հասկացությունը և սկզբունքները: Միջազգային ծովային իրավունք հասկացությունը: Ծովային տարածությունների իրավական ռեժիմը: Միջազգային նեղուցներ և ջրանցքներ հասկացությունը. տարանցիկ անցման ռեժիմը:

Միջազգային հարաբերությունները նորագույն ժամանակներում. զարգացումներն ու ակտուալ հիմնախնդիրները:

Վերսալ-Վաշինգտոնյան համակարգի պայմանագրերը: Ազգերի լիզայի և ՄԱԿ-ի ստեղծումն ու գործունեությունը:

Նացիստական Գերմանիայի, ֆաշիստական Իտալիայի և միլիտարիստական Ճապոնիայի արտաքին արտաքին քաղաքականությունը: Երկրորդ աշխարհամարտն ու պատերազմական դիվանագիտությունը:

Սառը պատերազմը և Երկբևեռ աշխարհակարգը: ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը և արտաքին քաղաքական դոկտրինաները Սառը պատերազմի ընթացքում: Գաղութային համակարգի փլուզման գործընթացը, երրորդ աշխարհին ու չմիացած երկրների շարժումը: Միջուկային զենքի չտարածման մասին պայմանագրի (1968թ.) կնքումը: Համաեվրոպական և Հելսինկիի գործընթացն ու Հելսինկիի ակտի ստորագրումը:

Իսրայել պետության հռչակումը: Արաբ-իսրայելական պատերազմներն ու հաշտեցման գործընթացը: Հնդկաստան-պակիստանյան հակամարտությունը: Կիպրոսի հիմնախնդիրը: Հարավսլավիայի էվոլյուցիան և փլուզման գործընթացը:

Իրան-իրաքյան պատերազմի պատճառները, ընթացքն ու արդյունքները:

Պինգ-պոնգի դիվանագիտությունը՝ ՉԺՀ-ԱՄՆ հարաբերությունների համատեքստում: Լարվաձության և լարվածության թուլացման փուլերը՝ ԽՍՀՄ-ԱՄՆ հարաբերություններում: Գերմանական հարցը 1945/49-1990 թթ. և Գերմանիայի վերամիավորումը:

ԱՄՆ, ՉԺՀ և ՌԴ ռազմավարական փաստաթղթերի (Ազգային անվտանգության ռազմավարություն, Ռազմական դոկտրին, Արտաքին քաղաքականության կոնցեպցիա) համեմատական վերլուծություն:

ԱՄՆ-ի արտաքին քաղաքական դոկտրիններն ու գերակայությունները հետսառըպատերազմյան ժամանակաշրջանում:

ՌԴ արտաքին քաղաքական գերակայությունները:

ՉԺՀ-ի աճի պատճառներն ու զարգացման դինամիկան հետսառըպատերազմյան ժամանակաշրջանում:

Մեծ Մերձավոր (Միջին) Արևելքը և Ասիա-Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանը արդի միջազգային հարաբերությունների համատեքստում:

Աֆրիկան և Լատինական Ամերիկան արդի համաշխարհային քաղաքականության համատեքստում:

Եվրոպական ինտեգրացիայի գործընթացն ու Եվրամիության երրորդ և չորրորդ ընդլայնումները: Եվրոպական միության ինստիտուտները:

Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպությունը: Նավթ արտահանող երկրների կազմակերպության/ՆԱԵԿ (OPEC) ստեղծումն ու գործունեությունը: Շանհայի համագործակցության կազմակերպության ստեղծումն ու գործունեությունը:

Խաղերի տեսությունը միջազգային հարաբերություններում:

Ազգային հզորության տարրերը: Դաշինքներ և հակադաշինքներ. Դաշինքներն ընդդեմ համաշխարհային տիրապետության:

Հայաստանը և միջազգային հարաբերությունները 1918-2021թթ.:

1918թ. Տրապիզոնի հաշտության խորհրդածողովը. Հայկական հարցի արծարծումները: Դիվանագիտական բանակցությունները Բաթումում. Անդրկովկասյան պետության կազմալուծումը. երեք անկախ հանրապետությունների ստեղծումը (1918թ. մայիս): 1918թ. հունիսի 3-ի Բաթումի պարտավորագիրը և հունիսի 4-ի պայմանագիրը: Թուրքիայի կողմից Հայոց անկախ պետության ճանաչման շարժառիթները և նպատակները (1918 թ.): Հայաստանի առաջին Հանրապետության արտաքին գործերի նախարարության ստեղծումը: Վրաստանում Հայաստանի առաջին Հանրապետության դիվանագիտական և հյուպատոսական առաքելությունների ստեղծումը: Հայկական հարցը Փարիզի կոնֆերանսում: Սան-Ռեմոյի կոնֆերանսը: Սերի պայմանագիրը: Լոզանի կոնֆերանսը: Հայկական հարցը կոնֆերանսում: Հայաստանը ըստ Ալեքսանդրապոլի (1920թ. դեկտ. 2), Մոսկվայի (1921 թ. մարտի 16), և Կարսի (1921 թ. հոկտ. 13) պայմանագրերի (համեմատական վերլուծություն): Հայաստանի առաջին Հանրապետության կազմավորումը: Արտաքին հարաբերությունների ներպետական և արտասահմանյան մարմինները: Հայաստանի առաջին Հանրապետության միջազգային դրությունը և արտաքին քաղաքականությունը (ընդհանուր բնութագրումը): Հայաստանի առաջին Հանրապետության արտաքին քաղաքականության երեք հիմնական փուլերը և նրանց համեմատական վերլուծությունը: Հայաստանի առաջին Հանրապետության առնչությունները Խորհրդային Ռուսաստանի հետ (1918թ. հունիս - նոյեմբեր): Վրաց-ադրբեջանական ռազմական դաշինքները և Հայաստանի Հանրապետության դիրքորոշումը (1919թ. հունիս, սեպտեմբեր): Հայաստանի առաջին Հանրապետության հարաբերությունները Ռուսաստանի ոչ խորհրդային պետական կազմավորումների

հետ (1918-1920թթ.): Հայաստանի առաջին Հանրապետության միջազգային դրությունը և արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունները (1918-1920թթ.): Խորհրդային Ռուսաստանի հետ ՀՀ հարաբերությունները 1918-1920թթ.: Հայաստանի սահմանների հարցի արձարծումները 1945-1946թթ. և դրա արդյունքները: Հայաստանի երրորդ Հանրապետության անկախության ճանաչման գործընթացը: ՀՀ արտաքին հարաբերությունների պետական մարմինները, դրանց խնդիրները: ՀՀ հարաբերությունները սահմանակից երկրների հետ արդի ժամանակաշրջանում: ՀՀ-ՌԴ հարաբերությունները 1991-2021 թթ.: ՀՀ-ԱՄՆ հարաբերությունները 1991-2021 թթ.: Հայաստանի երրորդ Հանրապետության անդամակցությունը միջազգային կազմակերպություններին: Ինտեգրացիոն գործընթացների առանձնահատկությունները հետխորհրդային տարածքում: ՀՀ անդամակցությունը հետխորհրդային տարածքում ձևավորված կազմակերպություններին (ԱՊՀ, ՀԱՊԿ, ԵԱՏՄ): Թուրքիայի Հանրապետության քաղաքականությունը Հարավային Կովկասում 1991-2021 թթ.: Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքականությունը Հարավային Կովկասում 1991-2021 թթ.: ՌԴ-ԱՄՆ հարաբերությունները 1991-2021 թթ.: ՌԴ արտաքին քաղաքականությունը հետխորհրդային տարածքում 2000-2021թթ.: ԱՄՆ-ի շահերը Հարավային Կովկասում և Կենտրոնական Ասիայում՝ արդի շրջանում: Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը:

Դիվանագիտության ժամանակակից մոդելի ձևավորումը: (Դիվանագիտության պատմության էվոլյուցիան)

Անտիկ դիվանագիտական համակարգը:

Դիվանագիտությունը Հին Հունաստանում և Հին Հռոմում: Դեսպանների նշանակումը: Դիվանագիտական անձեռնմխելիությունը: Օտարերկրյա դեսպանությունների ընդունելության կարգը Հին Հռոմում: «Ներքին դիվանագիտությունը»:

Իտալական դիվանագիտական համակարգի ձևավորումը XII-XV դդ.:

Դիվանագիտական ծառայությունը Վենետիկում: Ճլորենցիայի դիվանագիտությունը: Իտալական դիվանագիտության մեթոդներն ու առանձնահատկությունները:

Ֆրանսիական դիվանագիտական համակարգի ձևավորումը XVI-XVIII դդ:

Արտաքին հարաբերությունների մշտական մարմինների ստեղծումը: Դիվանագիտական գրագրության տարածումը: Դիվանագիտական արարողակարգի զարգացումը: Եվրոպական դիվանագիտությունը ուժերի հավասարակշռության համակարգի պայմաններում:

Քրիտանական դիվանագիտական համակարգը XIX դ. և XX դ. սկզբին:

Հետախուզության դերի բարձրացումը դիվանագիտության մեջ: Պրոտեկցիոնիզմի և մերկանտիլիզմի դիվանագիտությունը: «Եվրոպական համերգի» դիվանագիտական համակարգը:

Պառլամենտական պետությունների դիվանագիտական ծառայության բարեփոխումը XX դ. Առաջին կեսին:

Վ. Վիլսոնի «դեմոկրատական» դիվանագիտության հայեցակարգը: Դիվանագիտական ծառայության բարեփոխումները: Հյուպատոսական մարմինների դերի բարձրացումը: Տնտեսական գործոնի դերը դիվանագիտական մարմինների գործունեության մեջ:

Տոտալիտար պետությունների դիվանագիտությունը:

Գաղափարախոսական հայեցակարգերի կիրառումը ֆաշիստական Իտալիայի, նացիստական Գերմանիայի և Խորհրդային Միության դիվանագիտության մեջ: Տոտալիտար պետությունների դիվանագիտության տրանսֆորմացիան:

Դիվանագիտական ծառայությունը միջազգային հարաբերությունների նոր համակարգում XX դ. երկրորդ կեսին XXI դարում:

Միջազգային հարաբերությունների համակարգի փոփոխությունը XX դ. երկրորդ կեսին:

Արմատական փոփոխությունը միջազգային հարաբերություններում և դիվանագիտությունը: Իշխանության և որոշումների կայացման կենտրոնների ապակենտրոնացումը: Դիվանագիտության նոր ձևերի սկզբնավորումը: Կառավարական և ոչ կառավարական ակտորների փոխներգործությունը միջազգային ասպարեզում: Citizen diplomacy բանակցային գործընթացի «տեխնոկրատիզացիան»:

Դիվանագիտական կառույցները նոր պայմաններում:

Բազմակողմ դիվանագիտության և գազաթափողովների դերի աճը դիվանագիտական հարաբերություններում: ԱԳԳ-ների գործառույթների իրականացման հեռանկարները: ԱԳԳ-ն որպես պետական շահերի գլխավոր «պահապան» (gatekeeper): ԱԳԳ-ի համակարգող ֆունկցիան պետության արտաքին հարաբերությունների մարմինների համակարգում: Դեսպանությունների համալրումը ոչ կարիերային դիվանագետներով:

Դիվանագիտական ծառայությունների արդի վիճակի համեմատական վերլուծությունը (ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի և Ռուսաստանի օրինակով):

ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Իտալիայի արտաքին աղաքական կուրսի կոորդինացումը տարբեր գերատեսչությունների միջև: Կառուցվածքային փոփոխությունները արտաքին գործերի գերատեսչություններում: Դիվանագիտական ապարատի աճը և դիվանագիտական ցանցի ընդլայնումը Բյուջետային Ֆինանսավորման կրճատումը և դիվանագիտական մարմինների արդյունավետության բարձրացման հարցը: Ֆունկցիոնալ և կառուցվածքային բարեփոխումները արտաքին գործերի գերատեսչություններում:

Ներկայացուցչական ինստիտուտների նոր ձևերը:

Դիվանագիտական ներկայացուցչությունների նոր ձևերը դիվանագիտական հարաբերությունների խզման կամ բացակայության պայմաններում: Երրորդ պետության շահերի ներկայացուցչությունների միջազգային պրակտիկան: Սեփականության ինդիքների առաքելությունը (Property Mission),

Ներկայացուցչական բյուրոները (Representative Offices) և կապերի բյուրոները (Liason Offices) «Շահերի սեկցիաները» (Interest Section, Interest Office, Interest Service)

Բազմակողմ դիվանագիտությունը

Բազմակողմ դիվանագիտության պատմական էվոլյուցիան:

ա) Բազմակողմ դիվանագիտության ձևավորման տեսական և գաղափարական հիմքերը:

Անտուան Մարինյիի նախագիծը եվրոպական լիգայի ստեղծման մասին: Միջազգային խաղաղության պահպանման խնդիրը Էրազմուս Ռոտերդամացու, Սեբաստիան Ֆրանկի, Էմերիկ Կրյուսեի և միջնադարյան այլ հեղինակների աշխատություններում: Եվրոպական պետությունների համագործակցության տեսությունը Հ. Հրոցիուսի և Ա. Սյուլիի աշխատություններում: «Հավիտենական խաղաղության» հասնելու ՈՒ. Փեննի, Շ. Դե Սեն-Պյեռի, Ի. Կանտի և այլոց նախագծերում:

բ) «Կոնֆերանսների դիվանագիտության» պատմական զարգացումը:

1648 թ. Վեստֆալյան կոնգրեսի միջազգային նշանակությունը: Ռիսվիկի (1697) և Կարլովիցի (1699թ.) վեհաժողովները: 1814-1815թթ. Վիեննայի վեհաժողովը: 1899 և 1907 թթ. Հաագայի կոնֆերանսները: 1919թ. Փարիզի հաշտության կոնֆերանսը: «Կոնֆերանսային դիվանագիտության» զարգացումը ՄԱԿ-ի շրջանակներում:

գ) Միջազգային միջկառավարական կազմակերպությունների դիվանագիտությունը:

Մշտական հիմքերի վրա գտնվող միջազգային ինստիտուտների ստեղծման պատմական անհրաժեշտությունը: Ազգերի Լիգայի կառուցվածքը և նպատակները: ՄԱԿ-ի ստեղծումը (1945թ.), նրա կառուցվածքը և նպատակները: Տարածաշրջանային միջազգային կազմակերպությունների դերը բազմակողմ դիվանագիտության մեջ (ԵԱՀԿ, ԱՊՀ, ԵԽ, ԵՄ, ԱՊԿ, ԱՊՄ և այլն): Ռազմաքաղաքական միջազգային միավորումների (ՆԱՏՕ, ՀԱՊԿ, ՀԱԱՊԿ) դերի աճը բազմակողմ դիվանագիտության մեջ:

Բազմակողմ միջկառավարական դիվանագիտությունը արդի միջազգային հարաբերությունների համատեքստում:

Միջազգային իրադարձության գլոբալիզացիայի և ինտեգրացիոն գործընթացների ներգործությունը բազմակողմ դիվանագիտության վրա: Ժողովրդականացման գործընթացների ազդեցությունը միջազգային կոնֆերանսների և միջազգային կազմակերպությունների աշխատանքի վրա: Կոնսենսուսի պրակտիկայի կիրառումը բազմակողմ դիվանագիտության շրջանակներում: Կոնսենսուսի դրական և բացասական ասպեկտները «Կոնսենսուս մինուս մեկ» բանաձևի կիրառումը միջազգային կազմակերպություններում:

Բազմակողմ դիվանագիտության մեթոդի էվոլյուցիան

Միջազգային կոնֆերանսների գումարման նախապատրաստական հարցերը: Մասնակիցների հրավիրումը և քննարկվող հարցերի շրջանակի նախնական համաձայնեցումը: Կոնֆերանսի անցկացման վայրի ընտրությունը: Բազմակողմ հանդիպումների նախագահության կարգը: Քվեարկության կարգը: Հատուկ առաքելությունների կարգավիճակը: Բանակցային գործընթացը բազմակողմ դիվանագիտության շրջանակում: «Կոշտ» և «մեղմ» բանակցային ձևաչափերը:

Դիվանագիտական արարողակարգի զարգացումը բազմակողմ դիվանագիտության մեջ:

Եկեղեցական արարողակարգը միջնադարում: Հուլիոս 2 պապի «Միապետությունների հնության ռեեստրը (մատյանը)» (XVIդ.): Դեսպանների ընդունելության արարողակարգը միջնադարում և նոր ժամանակներում: Մարկիզ Պոմբալի առաջարկը դիվանագիտական ավագությունը որոշելու հարցում: 1815 թ. Վիեննայի ռեզլամենտը և դիվանագիտական նոր ընթացակարգը: Դիվանագիտական ներկայացուցիչների դասակարգման փորձի ձախողում: Ազգերի Լիգայի շրջանակներում (1927թ.): Դիվանագիտական նոր ընթացակարգի սահմանումը 1961 թ. Դիվանագիտական հարաբերությունների մասին Վիեննայի կոնվենցիայով: Բազմակողմ պայմանագրերի ստորագրման ընթացակարգը (alternat): Այբենական

ընթացակարգը: Դիվանագիտական ավագության հարցը ՄԱԿ-ում: Դիվանագիտական լեզուն բազմակողմ հանդիպումներում: Լատիներենի, ֆրանսերենի և անգլերենի կիրառման պատմական էվոլյուցիան: ՄԱԿ-ի և միջազգային այլ կազմակերպությունների աշխատանքային լեզուները:

Ոչ կառավարական (ոչ պետական) ակտորների դիվանագիտության կայացման փուլերը:

Դիվանագիտության ոչ պետական հիմնական ակտորները: Խաղաղության կողմնակիցների կազմակերպությունները XIX-XX դդ.:

Ոչ կառավարական կազմակերպությունների կարգավիճակը Ազգերի Լիգայում և ՄԱԿ-ում: Իրավապաշտպան կազմակերպությունները: Փորձագիտական խմբերը: Լոբբիստական կազմակերպությունները: «Քաղաքացիական դիվանագիտության» իրականացման ձևերը:

Ոչ կառավարական դիվանագիտության ներգործությունը միջազգային հարաբերությունների համակարգի վրա:

Ջ. Ռոզենաուի մոտեցումները ոչ կառավարական դիվանագիտության հարցում Թ. Պրինսենի և Մ. Ֆիզների տեսությունը: «Դիվանագիտության կատալիզատոր» հասկացությունը: Ոչ կառավարական կազմակերպությունների անմիջական գործողությունները և պետությունների ու միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության ձևաչափերը: Հակազլոբալիստների շարժումը: Պաշտոնական դիվանագիտության համագործակցությունը ոչ պետական ակտորների հետ մարդու իրավունքների, շրջակա միջավայրի պաշտպանության, մարդասիրական հարցերի, գիտակրթական ծրագրերի իրագործման և այլ խնդիրների շուրջ «Երկրորդական ուղու» («Second-track») դիվանագիտությունը: Ոչ պետական ռեսուրսների օգտագործումը պրոֆեսիոնալ դիվանագետների կողմից:

Բաց և հանրային դիվանագիտություն:

Բաց դիվանագիտության հայեցակարգը

«Բաց դիվանագիտություն» («Public diplomacy») հասկացությունը: Քարոզչության և արտաքին քաղաքական ձեռնարկումների հանրային հիմնավորման կարևորությունը դիվանագիտության մեջ: «Հանրային դիվանագիտության» կիրառումը ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության մեջ: Քարոզչական և մարքեթինգային տեխնոլոգիաների կիրառումը: Ապատեղեկատվության և «սև քարոզչության» տատանումը: Տեղեկատվական ռեսուրսների օգտագործումը («Ազատություն», «Ամերիկայի ձայն», « CNN »): «Հանրային դիվանագիտության» կիրառումը Մեծ Բրիտանիայի արտաքին քաղաքականության մեջ: Բրիտանական խորհրդի և BBC-ի ռեսուրսների օգտագործումը: ՋԼՄ-ների դերը «հանրային դիվանագիտության» մեջ: Նոր տեխնոլոգիաների և համացանցի հնարավորությունների օգտագործումը:

Տնտեսական դիվանագիտությունը

Տնտեսական գործոնի դերը դիվանագիտության պատմության մեջ:

Առևտրական հարաբերությունների զարգացումը անտիկ շրջանում և միջնադարում: Ապրանքների և վաճառականների ազատ տեղաշարժվելու իրավունքը: Առևտրային դիվանագիտությունը իտալական պետությունների, Ֆրանսիայի, Գերմանիայի, Մեծ Բրիտանիայի և ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության մեջ XV-XIX դարերում: Տնտեսական խնդիրներով զբաղվող ստորաբաժանումների ստեղծումը արտաքին գործերի գերատեսչություններում: Տնտեսական խնդիրները որպես առաջնահերթություն դիվանագիտական ծառայության մեջ: Անցումը «ավանդական» դիվանագիտությունից կոմերցիոն դիվանագիտության: Տնտեսական քաղաքականության դոկտրինները (պրոտեկցիոնիզմ, լիբերալիզմ): «Բաց դռների» քաղաքականությունը Չինաստանում:

Տնտեսական դիվանագիտությունը որպես բազմակողմ դիվանագիտության գործոն:

Նոր տնտեսական կարգի ձևավորումը XX դ. Երկրորդ կեսին: Միջազգային ֆինանսատնտեսական կազմակերպությունների ստեղծումը: Արժույթի միջազգային հիմնադրամ: Վերակառուցման և զարգացման միջազգային բանկ: Առևտրի

համաշխարհային կազմակերպությունը: Միջազգային տնտեսական կազմակերպությունը որպես տնտեսական դիվանագիտության ինստիտուտ: Տնտեսական դիվանագիտության ոչ պաշտոնական խմբերը բազմակողմ դիվանագիտության մեջ («Յոթի խումբ», «Ութի խումբ», «Քսանի խումբ» և այլն): Պետությունների փոխգործակցությունը միջազգային տնտեսական տարբեր կազմակերպությունների հետ:

Տնտեսական դիվանագիտության ակտորները:

Տնտեսական դիվանագիտության իրականացման պետական ինստիտուտական մարմինների մասնակցությունը արտաքին տնտեսական հարաբերություններին: Կառավարական մարմինների մասնակցությունը արտաքին տնտեսական հարաբերություններին: ԱՄՆ-ի «Ազգային արտահանման ռազմավարությունը» (1993 թ.): Կառավարությունների աջակցությունը մասնավոր ընկերություններին առևտրաֆինանսական գործարքների կնքման հարցում: Արտաքին գործերի գերատեսչությունների մենաշնորհի վերացումը տնտեսական գերատեսչությունների դերի աճը: Տնտեսական դիվանագիտության ոչ պետական ակտորները: «Միջազգային առևտրի բրիտանական կազմակերպությունը» Առևտրաարդյունաբերական պալատները: Կ. Դե Լա Կարյերի մակրոտնտեսական և միկրոտնտեսական դիվանագիտության դասակարգումը:

Դիվանագիտական գերատեսչությունների և ներկայացուցչությունների գործունեության տնտեսական ուղղությունները:

ա). ԱՄՆ-ի պետական դեպարտամենտի տնտեսական գործունեության հիմնական ուղղությունները: Նախագահի, Կոնգրեսի, պետական դեպարտամենտի և առևտրի նախարարության ազդեցությունը արտաքին տնտեսական գործունեության վրա: Ամերիկյան դեսպանությունների հիմնական խնդիրները տնտեսական դիվանագիտության ոլորտում: Ամերիկյան դեսպանությունների կոմերցիոն բաժինների գործունեությունը:

բ). Մեծ Բրիտանիայի Ֆորին օֆիսի տնտեսական գործունեության հիմնական ուղղությունները: Առևտրի և արտահանման գլխավոր վարչությունը և Միացյալ արտահանման տնօրինության գործունեությունը: Բրիտանական դեսպանությունների կոմերցիոն բաժինների գործունեությունը:

գ). Գերմանիայի արտաքին գործերի գերատեսչության տնտեսական գործունեության հիմնական ուղղությունները: Ֆինանսների, Էկոնոմիկայի և համագործակցության հարցերով նախարարությունների դերը արտաքին տնտեսական գործունեության ոլորտում: ԱԳՆ տնտեսական դեպարտամենտը: Գերմանական դեսպանությունների կապը տնտեսական գերատեսչությունների հետ:

դ). Ֆրանսիայի արտաքին գործերի գերատեսչության (Կէ դ' Օրսէի) տնտեսական գործունեության հիմնական ուղղությունները: Եվրոպական տնտեսական համագործակցության միջգերատեսչական կոմիտեի գլխավոր քարտուղարությունը (SGCI): Ֆրանսիական դիվանագիտական ներկայացուցչությունների «Տնտեսական էքսպանսիայի բաժինները» (PEE): Էկոնոմիկայի նախարարության արտաքին տնտեսական կապերի վարչությունը: Ֆրանսիական դեսպանությունների ֆինանսական հարցերի գործակալությունը:

ե). Իտալիայի արտաքին գործերի գերատեսչությունը (Ֆարնեզինա) տնտեսական գործունեության հիմնական ուղղությունները: Իսպանիայի, Բելգիայի և Պորտուգալիայի արտաքին հարաբերությունների մարմինների տնտեսական գործունեության հիմնական ուղղությունները:

Դիվանագիտությունը Եվրոպական ինտեգրացիայի պայմաններում:

1. Եվրոպական միության արտաքին քաղաքականության մեխանիզմը:

Եվրոպական միության արտաքին քաղաքականության հիմնական մարմինները և նրանց գործառույթները:

- Եվրոպական խորհուրդ (European Council)

- Եվրոպական միության խորհուրդ (Council of the European Union)

- Եվրոպական հանձնաժողով (European Commission)
 - Եվրոպական խորհրդարան (European Parliament)
 - Արտաքին գործերի խորհուրդ (Foreign Affairs Council)
 - Եվրոպական խորհրդի նախագահ (President of the European Council)
 - Արտաքին գործերի և անվտանգության քաղաքականության բարձր ներկայացուցիչ (High Representative of the Union for Foreign Affairs and Security Policy)
- Արաքին քաղաքական որոշումների ընդունման կարգը Եվրոպական միությունում: Քվեարկության կարգը և անդամ պետությունների համագործակցությունը:

Եվրոպական միության դիվանագիտական ինստիտուտները:

Եվրոպական միության դիվանագիտական ներկայացուցչությունները: Արտաքին ծառայության տնօրինության ստեղծումը (External service Directorate) (2002թ.): Արտաքին գործերի եվրոպական ծառայության ստեղծումը (2010թ.) (European External Action Service): Ծառայության հիմնական գործառույթները: ԵՄ դիվանագիտական ծառայության առանձնահատկությունները: «Անաղմուկ դիվանագիտության» (Quiet Diplomacy) հայեցակարգը: Արտաքին գործողությունների եվրոպական ծառայության կառուցվածքը տարածքային և ֆունկցիոնալ օպերատիվ դիվանագիտական ստորաբաժանումները:

2. Եվրոպական միության ակտիվ և պասիվ դիվանագիտական իրավունքը:

Եվրոպական միության դիվանագիտական ներկայացուցչությունները այլ երկրներում և միջազգային կազմակերպություններում: Եվրոպական միության դեսպանների և առաքելությունների ղեկավարների հիմնական խնդիրները: Եվրոպական միության հատուկ դիվանագիտական առաքելությունները (Մերձավոր Արևելքում, Հարավարևելյան Եվրոպայում, նախկին Հարավսլավիայում, Կոսովոյում, Պաղեստինի ինքնավարությունում և այլուր):

Եվրոպական միության դիվանագիտական արարողակարգը:

Եվրոպական միության դիվանագիտական արարողակարգի առանձնահատկությունները: Եվրոպական միությունում դեսպան նշանակվելու և ազրեման ստանալու կարգը: Բրյուսելում դեսպաններին դիմավորելու և հավատարմագրերը հանձնելու արարողակարգը: Եվրոպական միության դիվանագիտական կորպուսը և դուայենը: Դիվանագիտական ներկայացուցչությունների կապերը Եվրոպական միության պրոտոկոլային ծառայության հետ: Եվրոպական միությունում հավատարմագրված դեսպանների առաքելության ավարտը և հետ կանչումը:

Եվրոպական միության ներքին դիվանագիտական ծառայությունը:

Եվրոպական միությունում պետությունների դիվանագիտական ներկայացուցչությունների գործունեության հիմնական ուղղությունները.

- Տնտեսություն և ֆինանսներ
- Արտաքին քաղաքականություն և արտաքին առևտուր
- արդարադատություն, ներքին գործեր, ներգաղթ, պայքար հանցագործությունների դեմ
- սոցիալական խնդիրներ, առողջապահություն, մշակույթ
- համագործակցությունը ԵՄ այլ ինստիտուտների հետ և այլն:
- ԵՄ-ում մշտական ներկայացուցչությունների ղեկավարների (COREPER II) և մշտական ներկայացուցչությունների ղեկավարների տեղակալների (COREPER I) կոմիտեների գործունեությունը: ԵՄ-ում պետությունների մշտական ներկայացուցչությունների հիմնական խնդիրները.
- տեղեկատվության հավաքումը, ԵՄ Հանձնաժողովի առաջարկների ուսումնասիրությունը
- արտաքին գործերի նախարարներին խորհրդատվությունը
- դեսպանի պարբերական այցելությունները հայրենիք՝ պետական պաշտոնյաներին ԵՄ ներսում ընթացող գործընթացների և համարժեք

գործողությունների վերաբերյալ խորհրդատվության տրամադրելու նպատակով

- ազգային ու եվրոպական քաղաքականության համաձայնեցումն ու կոորդինացումը:

Եվրոպական միության մշտական ներկայացուցչությունները անդամ-պետությունում: Եվրոպական միության Հանձնաժողովի տարածաշրջանային բյուրոները և տեղեկատվական կենտրոնները: Դիվանագիտական կադրերի և փորձի փոխանակման պրակտիկան ԵՄ-ում: Համատեղ դիվանագիտական ներկայացուցչությունների հեռանկարները:

Դիվանագիտությունը եվրոպական ռեգիոնալիզացիայի համատեքստում:

Եվրոպական ռեգիոնալիզացիայի սուբյեկտները: Միջտարածքային համագործակցությունը Եվրոպական Միությունում: Կենտրոնական Ալպերի միջշրջանային ընկերակցությունը (1972թ.): Միջերկրականի ինտեգրացիոն ծրագիրը և տարածաշրջանային համագործակցության այլ ձևերը: Ռեգիոնալիզացիայի խնդիրների տեսական ասպեկտները: տարածաշրջանային քաղաքականության ինստիտուցիոնալիզացիան: Տարածաշրջանների կոմիտեի ստեղծումը: Պարադիվանագիտությունը և տարածաշրջանների ներկայացուցչությունները Եվրոպական Միությունում:

Արտաքին քաղաքականության տեղեկատվական ապահովումը:

Դիվանագիտական տեղեկատվության աղբյուրները: Տեղեկատվության կառավարման և մատուցման հիմնական ձևերը: Տեղեկատվական աշխատանքն արտակարգ իրավիճակի պայմաններում: Մամուլի ասուլիսիներ, ճեպագրույցներ, հարցազրույցներ, մեկնաբանություններ: Աշխատանքը սոցիալական ցանցերում:

ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ և ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. ՀՀ Ազգային անվտանգության ռազմավարություն (2020)
https://www.sns.am/file_manager/razmavarutyun/%D4%B1%D5%A6%D5%A30.pdf
2. ՀՀ Ազգային անվտանգության ռազմավարություն (2007)
<https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=31189>
3. Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), խմբ. Ջ. Կիրակոսյան, Ե., 1972:
4. Հայոց ցեղասպանություն, աշխարհի պետությունները, ազգային խորհրդարանները և միջազգային կազմակերպությունները դատապարտում են և ճանաչում /նյութերի ժողովածու/, կազմող և պատասխանատու խմբագիր Լ.Ա. Բարսեղյան, Ե., 2005:
5. Геноцид армян, документы и комментарии, т. 1, М., 2002, т. 2, часть 1, 2003, т. 2, часть 2, 2005.
6. Указ Президента Российской Федерации от 02.07.2021 № 400 "О Стратегии национальной безопасности Российской Федерации"
<http://publication.pravo.gov.ru/Document/View/0001202107030001>
7. Указ Президента Российской Федерации от 25 декабря 2014 года № 2976 Об утверждении Военной доктрины Российской Федерации
<https://docs.cntd.ru/document/420246589>
8. Указ Президента Российской Федерации от 30.11.2016 г. № 640 Об утверждении Концепции внешней политики Российской Федерации
<http://www.kremlin.ru/acts/bank/41451/page/1>
9. China's National Defense in the New Era, The State Council Information Office of the People's Republic of China July 2019, First Edition: Beijing, China, 2019.
http://www.xinhuanet.com/english/2019-07/24/c_138253389.htm

10. Interim National Security Strategic Guidance, The White House, Washington (March 2021) <https://www.whitehouse.gov/wp-content/uploads/2021/03/NSC-1v2.pdf>
11. Summary of the 2018 National Defense Strategy of the United States of America : Sharpening the American Military's Competitive Edge. - <https://dod.defense.gov/Portals/1/Documents/pubs/2018-National-Defense-Strategy-Summary.pdf>

Հուշեր, ճառեր, ելույթներ, հարցազրույցներ

1. Джордж Ллойд, Правда о мирных договорах, т. 2, М., 1957.
2. Бжезинский З., Великая шахматная доска, М., 1998.
3. Киссинджер Г., Дипломатия, М., 1997.
4. Примаков Е.М., Анатомия ближневосточного конфликта, М., 1978.
5. Путин В. В., Новый интеграционный проект для Евразии — будущее, которое рождается сегодня - «Известия» Дата публикации: 04 октября 2011 г. <https://echo.msk.ru/blog/statya/817588-echo/>
6. Путин В. В., 75 лет Великой Победы: общая ответственность перед историей и будущим (Статья: Дата публикации: 19 июня 2020 года) - <http://kremlin.ru/events/president/news/63527>
7. Путин В. В., Быть открытыми, несмотря на прошлое (Статья Президента России опубликована в немецкой еженедельной газете Die Zeit и приурочена к 80-й годовщине начала Великой Отечественной войны) <http://kremlin.ru/events/president/news/65899>
8. Biden: The Full Transcript of President Biden's Remarks on Afghanistan,- The New York Times (August 16, 2021) - <https://www.nytimes.com/2021/08/16/us/politics/biden-taliban-afghanistan-speech.html>
9. Brzezinski, Z., The Grand Chessboard: American Primacy and Its Geostrategic Imperatives, 1997.

10. Full transcript of Joe Biden's inauguration speech (Published 20 January 2020)
<https://www.bbc.com/news/world-us-canada-55656824>
11. Kissinger H., World Order, Penguin Books: Reprint edition 2015.
12. Margaret Thatcher, Statecraft: Strategies for a Changing World, London: 2002.
13. Putin V., Speech and the Following Discussion at the Munich Conference on Security Policy (February 10, 2007) - President of Russia :
<http://en.kremlin.ru/events/president/transcripts/24034>
14. Xi Jinping: Speech by Xi Jinping at a Ceremony Marking the Centenary of the Communist Party of China (Full Text), July 1, 2021,-
<http://www.npc.gov.cn/englishnpc/c23934/202107/ce62fd23a2f24be7bb96c30b56c0c111.shtml>

ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԴԱՍԱԳՐՔԵՐ

1. Աթոյան Վ., Ուղեղային կենտրոններ. Ռազմավարական գաղափարների դարբնոցները, Երևան 2019:
2. Ավդիև Վ.Ի., Հին Արևելքի պատմություն, Ե., 1947:
3. Ավդիև Վ.Ի., Հին Հունաստանի պատմություն, Ե., 1982:
4. Բալայան Տ., Արտաքին քաղաքականության տեղեկատվական ապահովումը, Երևան, 2018:
5. Գալոյան Գ.Ա., Հայաստանը և մեծ տերությունները /1917-1923թթ./, Ե., 1999:
6. Գալոյան Գ.Ա., Հայաստանը մեծ տերությունների աշխարհակալական առճակատումներում /16-րդ դարից - 1917թ./, Ե., 2004:
7. Թուրխալյան Լ., Դիվանագիտական տերմինների և հապավումների բառարան, Ե., ՀՀ ԱԳՆ, 2004:
8. Խաչատրյան Կ.Հ., Հայ-ռուսական հարաբերությունները 1920-1922, Ե., 2007:
9. Կիրակոսյան Ջ., Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը, Ե., 1980:

10. Հարությունյան Ա., Առաջին համաշխարհային պատերազմի ռազմաղիվանագիտական պատմությունից, Ե., 1983:
11. Հիմնական փաստեր ՄԱԿ-ի մասին, Եր., 2002:
12. Հովհաննիսյան Ն.Հ., Արաբական երկրների պատմություն, հհ. 1-4, Ե., 2003-2007:
13. Հովհաննիսյան Ն.Հ., Դիվանագիտություն, Ե., 1997:
14. Հովհաննիսյան Ն.Հ., Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունը անդրկովկասյան-մերձավորարևելյան աշխարհաքաղաքական տարածաշրջանում, Ե., 1998:
15. Մաշկին Ն.Ա., Հին Հռոմի պատմություն, Ե., 1951:
16. Սուրադյան Մ., Մինասյան Է., Ռուսաց դիվանագիտությունը միջազգային հարաբերությունների համակարգում /18-19-րդ դդ./, Ե., 2005:
17. Պետրոսյան Գ. Հ., Հայաստանի Հանրապետության և Ուկրաինայի դիվանագիտական հարաբերությունների պատմությունից (1918-1920 թթ.) Երևան, 2002:
18. Պետրոսյան Գ. Հ., Անդրկովկասը դիվանագիտական հորձանուտում. Հայոց անկախ պետականության կերտումը (1917 թ. փետրվար – 1918 թ. հունիս), Երևան, 2018:
19. Պետրոսյան Գ.Հ., Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Ռուսաստանի հետ (1918-1920 թթ.), Երևան 2011:
20. Պետրոսյան Գ.Հ., Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Ռուսաստանի ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ (1918-1920թթ.), Երևան 2006:
21. Պետրոսյան Գ.Հ., Վրաստանում հայաստանի առաջին հանրապետության դիվանագիտական և հյուպատոսական առաքելությունների ստեղծման պատմությունից,- Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, քաղաքագիտություն, № 3, 2020, էջ 3-16:

22. Պետրոսյան Գ.Հ., Թուրքիայի կողմից Հայոց անկախ պետության ճանաչման շարժառիթները և նպատակները (1918 թ.) , - Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, քաղաքագիտություն, № 3, 2020, էջ 3-17:
23. Պետրոսյան Վ. Ս. (գիտական խմբագիր), «Քրդագիտական հետազոտություններ», հատոր 1-ին. «Քրդական գործոնը և հայ-քրդական առնչությունները տարածաշրջանային զարգացումների համատեքստում» (հոդվածների ժողովածու), Երևան 2020:
24. Չալըմյան Ն.Տ., Դիվանագիտական և հյուպատոսական ծառայություն և իրավունք, Ե., 2003:
25. Չելիդեհյան Ս., Դրաքման Դ. և Ֆասթ Լ. (խմբ.), Կոնֆլիկտ. Վերլուծությունից մինչև միջամտություն, Երևան, 2007:
26. Սկազկին Ս., Միջին դարերի պատմություն, հ. I, Ե., 1975, հ. II, Ե., 1982:
27. Տեր-Ղևոնդյան Վ.Ա., Կիլիկյան Հայաստանը և Մերձավոր Արևելքի արաբական երկրները 1145-1226թթ., Ե., 1994:
28. Քառյան Ս., Հայաստանի միջազգային դրությունը և արտաքին քաղաքականությունը 1918-1923թթ., Ե., 2005:
29. Борунков А., „Дипломатический протокол в России”, М. 2004.
30. Богатуров А.Д., Великие державы на Тихом океане. История и теория международных отношений в Восточной Азии после Второй мировой войны. 1945-1995. М., 1997.
31. Богатуров А.Д. (ред.) Системная история международных отношений в четырех томах (1918-2003), М., 2001-2003.
32. Бокшанин А., История международных отношений и дипломатии в древнем мире, М., 1948.
33. Внешняя политика и международные отношения в новое и новейшее время, М., 1984.

34. Внешняя политика Российской Федерации /1992-1999/. Учеб. пособие.
Барановский В.Г., Борисов Ю.Г., Богатуров А.Д., Хрусталеv М.А., М., 2000.
35. Внешняя политика стран Азии, М., 1984.
36. Внешняя политика стран Африки, М., 1984.
37. Внешняя политика стран Ближнего и Среднего Востока, М., 1984.
38. Внешняя политика стран Латинской Америки, М., 1984.
39. Гаджиев К.С., Введение в геополитику, М., 1997.
40. Готлиб В., Тайная дипломатия во время 1-ой мировой войны, М., 1960.
41. Гроций Гуго, О праве войны и мира, М., 1956.
42. Дебидур А., Дипломатическая история Европы, т.1, М., 1947, т. 2, Ростов-на-Дону, 1995.
43. Дипломатический словарь, тт. 1-3, М., 1971.
44. Европейская интеграция: мировые проблемы, М., 1992.
45. Жданов Н.В., Исламская концепция миропорядка, М., 2003.
46. Зонова Т., „Современная модель дипломатии. Истоки становления и перспективы развития", М., 2003 г.
47. Зонова Т., „Дипломатия: модели, формы, методы", М., 2014.
48. Зорин В., „Основы дипломатической службы", М., 1962.
49. Израэлян В.Л., Дипломатия в годы войны 1941-1945гг., М., 1985.
50. Израэлян В.Л., Дипломатия в годы войны 1941-1945гг., М., 1985.
51. История внешней политики России в 18-ом веке, М., 2000.
52. История внешней политики России, в 2-х книгах, М., 1997.
53. История дипломатии, под ред. В. Зорина, В. Семенова, С. Сказкина, В. Хвостова, т. 1, М., 1959, т. 2, под ред. Хвостова, М., 1963.
54. История дипломатии, т. 3 /1914-1939гг./, т. 4 /1939-1945гг./, под. ред. А. Громыко и др., М., 1965,1975.

55. История дипломатии, т. 5, книга первая, т. 5, книга вторая, под ред. А. Громько, М., 1974, 1979.
56. Кальвакоресси П. Мировая политика после 1945 года. М., 2000.
57. Китай в мировой политике, М., 2001.
58. Клейменова Н. Версальско-Вашингтонская система МО. М., 1995.
59. Ковалев А., Албука дипломатии, М., 1993.
60. Лунев С.И., Дипломатия в Южной Азии, М., 1997. Наринский М.М., История международных отношений /1945-1975/. Учебное пособие, РОССПЭН, М., 2004.
61. Макиавелли Н., Государь, М., 1990.
62. Межгосударственные отношения и дипломатия на древнем Востоке, отв. ред. И.А. Стучевский, М., 1987.
63. Международные отношения в 21-ом веке: новые действующие лица, институты и процессы, М., 2001.
64. Моммзен Т., История Рима, тт. 1-3, 5, М., 2000-2001.
65. Мурадян А., Самая благородная наука об основных понятиях международно-политической теории, М., 1990.
66. Нарочницкий А.Л., Международные отношения европейских государств с 1794 до 1830 г., М., 1946.
67. Нарочницкий А.Л., Международные отношения накануне и во время французской буржуазной революции конца 18-го века /1763-1794/, М., 1946.
68. Никольсон Г., „Дипломатия”, М., 1941.
69. Попов В.И., Современная дипломатия. Теория и практика, М., 2003.
70. Ревякин А.В., История международных отношений от Вестфальского мира до Первой мировой войны, М., 2004.
71. Рощин А.А., Послевоенное урегулирование в Европе, М., 1984.
72. Сказкин С., История международных отношений и дипломатии в средние века, М., 1948.

73. Советская внешняя политика в период Второй мировой войны. Курс лекций. М.М. Наринский и др., М., 1999.
74. Современные международные отношения, Барановский В.Г., Богатуров А.Д., Хрусталева М.А., М., 2000.
75. Современные международные отношения, ред. А.В. Торкунова, М., 2001.
76. Уткин А., Дипломатия Франклина Рузвельта, Свердловск, 1990.
77. Уткин А.И., Дипломатия Вудро Вильсона, М., 1989.
78. Уткин А.И., Мировой порядок 21-го века, М., 2001.
79. Хрусталева М.А., Международные отношения на Ближнем Востоке. Учебное пособие, МГИМО, М., 2003.
80. Цыганков П.А., Теория международных отношений, М., 2002.
81. Яковлев А.Н., От Трумэна до Рейгана. Доктрины и реальности ядерного века, М., 1985.
82. A Dictionary of World History, Oxford, 2015.
83. Bolt Paul J. and Gray, Adam K., China's National Security Strategy, INSS Research Paper (2007): US Air Force, Institute for National Security Studies, USAF Academy, Colorado https://www.usafa.edu/app/uploads/07_CHINAS-NATIONAL-SECURITY-STRATEGY.pdf
84. Brzezinski Zbigniew, Alternative to Partition: For a Broader Conception of America's Role in Europe, N.Y. 1965.
85. Buzan, B., Asia: A Geopolitical Reconfiguration, N.Y., 2012.
86. Clark I. Globalization and Fragmentation: International Relations in the XX century. Oxford, 1997.
87. Cordesman Anthony H., China's New 2019 Defense White Paper: An Open Strategic Challenge to the United States, But One Which Does Not Have to Lead to Conflict (July 24, 2019), <https://www.csis.org/analysis/chinas-new-2019-defense-white-paper>
88. Feltham J., «Diplomatic Handbook», N.Y. 1998.
89. Foltz R., Iran in World History, Oxford, 2015.
90. Goldstein E. Wars and Peace Treaties 1816-1991. Routledge, 1992.

91. Hamilton K., Langhorne R., «The Practice of Diplomacy: Its Evolution, Theory and Administration», 2011.
92. Hovhannisyanyan N., The Armenian Genocide. Armenocide - the most genocidal genocide. In ten languages of the World, Yerevan, 2009.
93. Jilbert M.J., South Asia in World History, Oxford, 2017.
94. Liddell, H., Strategy: Second Revised Edition, N.Y. 1999.
95. Metzler J. Divided Dynamism: The Diplomacy of Separated Nations: Germany, Korea, China. Lanham, 1996.
96. Parity of War: Evaluations and extensions of "The war ledger". Ann Arbor, 1996.
97. Pearson F., Rochester J. International Relations: the Global Conditions in the XX New York, 1998.
98. Polk W. Neighbors and Strangers: The Fundamentals of Foreign Affairs. Chicago, 1997.
99. Pekkanen S., The Oxford Handbook of the International Relations of Asia, Oxford, 2014.
100. Ropp P., China in World History, Oxford, 2010.
101. Scott H., The Oxford Handbook of Early Modern European History, 1350-1750, 2 vol., Oxford, 2015. The Cambridge Ancient History (I-XIV volumes), Cambridge, 1970-2005.
102. Sheenan M. The Balance of Power: History and Theory. London, 1996.
103. Smith, S., Hadfield A. and Dunne T. (Eds), Foreign Policy: Theories, Actors, Cases, 2008.
104. The New Cambridge Medieval History (1-7 volumes), Cambridge, 1995- 2005.
105. Young J. Britain and the world in the XX century. London, 1997.
106. Zakaria F., The Post-American World, New York and London: 2008.
107. Zürcher E., Turkey. A Modern History, New York, 2004.

ԻԳ.00.04. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(պատմական գիտություններ)

«Միջազգային հարաբերությունների» ուսումնասիրության աղբյուրներն ու գրականությունը, հայեցակարգերն ու մեթոդները, նպատակն ու խնդիրները: Արտաքին քաղաքականություն և դիվանագիտություն: Դիվանագիտության սահմանումները: Դիվանագիտական փաստաթղթերը որպես միջազգային հարաբերությունների ուսումնասիրության հիմնական աղբյուր: Դիվանագիտության տեղն ու դերը արտաքին հարաբերությունների համակարգում: Դիվանագիտությունը որպես միջազգային հարաբերությունների խաղաղ կարգավորման միջոց: Միջազգային հարաբերությունների պատմական փորձի գնահատականը: Ազգային պետությունների և միջազգային ինստիտուտների դերը դիվանագիտության ապահովման մեջ: Անհատի դերը միջազգային հարաբերություններում և դիվանագիտությունում:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԻՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Հին Արևելքի դիվանագիտությունը: Հին Միջագետքի և Փոքր Ասիայի առաջին պետական կազմավորումների արտաքին քաղաքականության բնույթը (Ք.ա. 3-2-րդ հազարամյակներ): Հին Եգիպտոսի դիվանագիտությունը: Ասորեստանի դիվանագիտությունը: Ուրարտուի (Վանի, Արարատյան) թագավորության արտաքին քաղաքականությունը: Աքեմենյան տերության ստեղծումը և արտաքին քաղաքականությունը (Ք.ա. 6-4-րդ դդ.)

Հին Հունաստանի դիվանագիտությունը: Հին Հունաստանի միջազգային կապերի ձևերը: Հին Հունաստանի դիվանագիտությունը դասական շրջանում (Ք.ա. 8-4-րդ դդ.) Միջազգային հարաբերությունները մակեդոնա-հելլենական շրջանում (Ք.ա. 4-2-րդ դդ.) Միջազգային հարաբերությունները Հելլենիստական աշխարհում:

Հին Հռոմի դիվանագիտությունը: Հռոմեական դիվանագիտության բնորոշ գծերը: Հռոմեական դիվանագիտությունը Հանրապետության շրջանում: Հռոմեական դիվանագիտությունը կայսրության շրջանում (1-5-րդ դդ.) Հայ-հռոմեական հարաբերությունները: Արտաշեսյանների և Արշակունիների դիվանագիտությունը և արտաքին քաղաքականությունը:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ (5 – 16-րդ դդ.)

Միջազգային հարաբերությունները 5-11-րդ դդ.: Բյուզանդիայի արտաքին քաղաքականությունը և դիվանագիտությունը: Հայ-բյուզանդական հարաբերությունները: Հռոմի Պապերը և Ֆրանկների պետությունը: Արաբական խալիֆայության արտաքին քաղաքականությունը: Հայ-արաբական հարաբերությունները: Կիևյան Ռուսիայի միջազգային դրությունը և արտաքին կապերը:

Միջազգային հարաբերությունները ֆեոդալական միապետության ամրապնդման ժամանակաշրջանում (11-16-րդ դդ.): Սրբազան Հռոմեական կայսրությունը և պապությունը: Եվրոպական պետությունների արտաքին քաղաքականության և դիվանագիտության բնույթը և բնորոշ գծերը: «Միջազգային իրավունք» գիտության սկզբնավորումը: Ֆրանսիայի դիվանագիտությունը: Անգլիայի դիվանագիտությունը: Իսպանիայի դիվանագիտությունը: Իտալիայի դիվանագիտությունը: Ռուսական պետության արտաքին քաղաքականությունը և դիվանագիտությունը: Կիլիկիայի հայկական պետության միջազգային դրությունը, արտաքին քաղաքականությունը և դիվանագիտությունը:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՄ (17-19 ԴԱՐ – 1918թ.)

Միջազգային հարաբերությունները 17-րդ դարում: Ֆրանսիական գերիշխանության ժամանակաշրջանը Եվրոպայում: Անգլիական բուրժուական հեղափոխության

դիվանագիտությունը (1640-1660թթ.): Օ. Կրումվել: Մոսկովյան պետության միջազգային դրությունը և դիվանագիտությունը:

Միջազգային հարաբերությունները 18-րդ դարում: Ֆրանսիայի դիվանագիտությունը: Անգլիայի արտաքին քաղաքականությունը: Գերմանական պետությունների միջազգային դրությունը: Դիվանագիտությունը Յոթնամյա պատերազմի շրջանում (1756-1763թթ.) Ռուսական կայսրության արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունները: Պյոտր 1-ի և Եկատերինա 2-րդի դիվանագիտությունը:

Ամերիկյան հանրապետության արտաքին քաղաքականությունը և դիվանագիտությունը:

Միջազգային հարաբերությունները և դիվանագիտությունը Ֆրանսիական բուրժուական հեղափոխության, թերմիդորյան հետադիմության և դիրեկտորիայի տարիներին (1789-1799թթ.): Ֆրանսիական միապետության դիվանագիտությունը հեղափոխության նախօրեին: Եվրոպական դիվանագիտությունը Ֆրանսիայում Սահմանադիր և Օրենսդիր ժողովների շրջանում (1789-1792թթ.) Եվրոպական դիվանագիտությունը Ֆրանսիայում միապետության տապալումից հետո: Յակոբինյան դիկտատուրայի դիվանագիտությունը (1793-1794թթ.) Թերմիդորյան հետադիմության շրջանի դիվանագիտությունը (1794-1795թթ.) Միջազգային հարաբերությունները դիրեկտորիայի տարիներին (1795-1799թթ.)

Միջազգային հարաբերությունները նապոլեոնյան պատերազմների շրջանում: **Վիեննայի վեհաժողովը:** Նապոլեոնի դիվանագիտությունը մինչև Տիլզիտ (1799-1807թթ.) Միջազգային հարաբերությունները և դիվանագիտությունը Տիլզիտից մինչև Նապոլեոնի պարտությունը Ռուսաստանում (1807-1812թթ.) Եվրոպական դիվանագիտությունը 1813-1814թթ. պատերազմի ժամանակ: Դիվանագիտական պայքարը Վիեննայի վեհաժողովում: Նապոլեոնի “հարյու օրը” և Վիեննայի վեհաժողովի արդյունքները:

Միջազգային հարաբերությունները Սրբազան դաշինքի ստեղծումից մինչև Ղրիմի պատերազմը: Արևելյան ճգնաժամը (1815-1853թթ.): Սրբազան դաշինքը և միջազգային

դիվանագիտությունը (1815-1825թթ.) Արևելյան ճգնաժամը և մեծ տերությունները: Եվրոպական դիվանագիտությունը 1830-1831թթ. հեղափոխությունների շրջանում: Արևելյան ճրգնաժամի խորացումը (1832-1847թթ.) Միջազգային իրադրությունը Եվրոպայում 1848-1849թթ. հեղափոխություններից մինչև Ղրիմի պատերազմը: **Միջազգային հարաբերությունները Ղրիմի պատերազմի շրջանում և Փարիզի հաշտությունից հետո (1853-1863թթ.):** 1853թ. ռուս-թուրքական ընդհարումը և մեծ տերությունները: Մեծ տերությունների դիվանագիտական գործունեությունը Ղրիմի պատերազմի ընթացքում և Փարիզի վեհաժողովում: Եվրոպան և Նապոլեոն 3-րդը: **Բիսմարկի դիվանագիտությունը Գերմանիայի միավորման հարցում և մեծ տերությունները (1864-1871թթ.):** Բիսմարկի դիվանագիտությունը Դանիայի և Ավստրիայի հետ պատերազմի տարիներին (1864-1866թթ.): Ֆրանս-պրուսական պատերազմի դիվանագիտական նախապատրաստումը (1867-1870թթ.): Ֆրանս-պրուսական պատերազմը և Ֆրանկֆուրտի խաղաղությունը (1870-1871թթ.): **Մերձավորարևելյան ճգնաժամը (1875-1878թթ.):** Բալկանյան ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի վերելքը և եվրոպական դիվանագիտությունը (1875-1876թթ.): Ռուս-թուրքական պատերազմը և Բեռլինի կոնգրեսը (1877-1878թթ.): Հայկական հարցի միջազգայնացումը:

Միջազգային հարաբերությունները 19-րդ դարի վերջին: Ավստրոգերմանական ռազմաքաղաքական դաշինքը: Եռյակ միության ստեղծումը: Ռուս-ֆրանսիական դաշինքի կազմավորումը (1891-1893թթ.): Անգլոգերմանական հակամարտությունը: Հեռավորարևելյան ճգնաժամը և մեծ տերությունները: Մերձավորարևելյան ճգնաժամը և մեծ տերությունները (1894-1897թթ.): Հայկական հարցը Օսմանյան կայսրությունում և միջազգային դիվանագիտությունը:

Միջազգային հարաբերությունները աշխարհի բաժանման համար պայքարի ավարտի և նրա վերաբաժանման համար մղված առաջին պատերազմների տարիներին (1898-1914թթ.): Աշխարհի բաժանման համար ռազմադիվանագիտական պայքարը: ԱՄՆ-ի դիվանագիտությունը: «Բաց դռների» քաղաքականությունը: «Մեծ մահակի»

քաղաքականությունը և «դոլլարի դիվանագիտությունը»: «Հեյի դոկտրինը»: Ռուսական ցարիզմի արտաքին քաղաքականությունը: Հեռավորարևելյան ճգնաժամի սրումը և ռուս-ճապոնական պատերազմը (1904-1905թթ.): Անտանտի կազմավորումը և Ավստրո-գերմանական դաշինքի հետ պայքարը: Միջազգային հարաբերությունները Բալկանյան պատերազմների շրջանում (1912-1914թթ.):

Հայկական հարցը 1912-1914թթ. և մեծ տերությունները:

Միջազգային հարաբերությունները և դիվանագիտությունը Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին (1914-1918թթ.): Դիվանագիտությունը Առաջին աշխարհամարտի տարիներին: Խորհրդային Ռուսաստանի պատերազմից դուրս գալը և դրա հետևանքները: Անտանտի հաղթանակը և պատերազմի ավարտը: Վ. Վիլսոնի «14 կետերը»:

Հայերի ցեղասպանությունը Օսմանյան Կայսրությունում և միջազգային դիվանագիտությունը: Տրապիզոնի բանակցությունները. Հայկական հարցի արձարծումները (1918 թ.): 1918թ. հունիսի 3-ի պարտավորագիրը, հունիսի 4-ի հաշտության դաշնագիրը: Թուրքիայի կողմից Հայոց անկախ պետության ճանաչման շարժառիթները և նպատակները (1918թ.): Հայաստանի առաջին Հանրապետության արտաքին գործերի նախարարության ստեղծումը: Վրաստանում Հայաստանի առաջին Հանրապետության դիվանագիտական և հյուպատոսական առաքելությունների ստեղծումը:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆՈՒՄ (1919-2021թթ.)

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1919-1945թթ.

Փարիզի հաշտության կոնֆերանսը: Միջազգային հարաբերությունների Վերսալ-վաշինգտոնյան համակարգի ձևավորումը (1919-1923թթ.)

